ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ ԹԻՎ 2

23.12.2019Թ. ԿՆՔՎԱԾ N <<ԳՀԱՊՁԲ-2020/15-1-ԵՊԲՀ-6>> ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան <<_____>>_____ 20___թ.

<<Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան>> հիմնադրամը, ի դեմս ռեկտոր **Ա. Ա. Մուրադյանի**, որը գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Գնորդ), մի կողմից, և **<<Ֆարմեգուս>> ՍՊԸ-ն,** ի դեմս Ընկերության տնօրեն **Գ. Արշակյանի**, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Վաճառող), մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև՝ կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, հիմք ընդունելով 23.12.2019թ. կնքված N <<ԳՀԱՊՁԲ-2020/15-1-ԵՊԲՀ-6>> գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.5-րդ կետը, <<Ֆարմեգուս>> ՍՊԸ-ի 03.07.2020թ. թիվ 6794 գրությունը և այն հանգամանքը, որ Ընկերության մոտ 20.03.2020թ. տեղի է ունեցել հարկման համակարգի փոփոխություն և փոփոխությունը չի դասվում ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 56-րդ կետով սահմանված արհեստական փոփոխությունների շարքին, կնքեցին սույն համաձայնագիրը հետևալի մասին:

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Հետագա համագործակցության նպատակով՝ Կողմերը որոշեցին՝

1.1 23.12.2019թ. կնքված N <<ԳՀԱՊՁԲ-2020/15-1-ԵՊԲՀ-6>> գնման պայմանագրի 3.1 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. **<<Պայմանագրի գինը կազմում է 1300000 (մեկ միլիոն երեք հարյուր հազար) ՀՀ դրամ, ներառյալ՝ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը: Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:>>**:

1.2 23.12.2019թ. կնքված N <<ԳՀԱՊՁԲ-2020/15-1-ԵՊԲՀ-6>> գնման պայմանագրի ավելացված արժեքի հարկի հաշվարկն իրականացնել մնացորդային գումարի 1100000 (մեկ միլիոն մեկ հարյուր հազար) ՀՀ դրամի նկատմամբ:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.3 Սույն Համաձայնագրում Կողմերի չնշված պարտավորությունները թողնվում են անփոփոխ:

2.4 Սույն Համաձայնագիրը կազմված է 1 (մեկ) էջից, կնքվում է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

<<ԳՆՈՐԴ>>	ՎԱՃԱՌՈՂ
<<Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան>>	«Ֆարմեգուս» ՍՊԸ
Հիմնադրամ	Հասցե՝ Ք.Երևան, Մամիկոնյանց 3շ.բն.41
Հասցե՝ ք. Երևան, 0025, Կորյունի 2	Բանկ՝ «Ամերիաբանկ» ՓԲԸ
Բանկ՝ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, Տերյան մ/ճ	Հ/Հ 1570051932950100
հ/հ 11500166513800	ՀՎՀՀ 00108127
ՀՎՀՀ 01503448	
Ռեկտոր՝ Ա. Ա. Մուրադյան	Տնօրեն՝ Գ. Արշակյան
_____	_____
(ստորագրությունը)	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Digitally signed by MURADYAN ARMEN 2007720078
Date: 2020.07.10 18:48:58 AMST

ARSHAKYAN GURGEN 2101710099

Digitally signed by ARSHAKYAN GURGEN 2101710099
Date: 2020.07.09 11:07:43 +04'00'

Հավելված N 3
ՀՀ ֆինանսների նախարարի 2017 թվականի
մայիսի 30-ի N 265-Ա հրամանի

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամը ստորև ներկայացնում է իր կարիքների համար քիմիական նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԳՀԱՊՁԲ-2020/15-1-ԵՊԲՀ» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2019 թվականի դեկտեմբերի 23-ին կնքված N «ԳՀԱՊՁԲ-2020/15-1-ԵՊԲՀ-6» պայմանագրում 2020 թվականի հուլիսի 10-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ N 1: *մատակարարի մոտ հարկման համակարգի փոփոխություն*

Փոփոխության նկարագրություն: *մատակարարի մոտ հարկման համակարգի փոփոխությամբ պայմանավորված լրացուցիչ համաձայնագրի կնքում*

Փոփոխության հիմնավորում: *ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման 56-րդ կետ և 2019 թվականի դեկտեմբերի 23-ին կնքված N «ԳՀԱՊՁԲ-2020/15-1-ԵՊԲՀ-6» պայմանագրի 8.5 կետ:*

Պատվիրատու՝ *«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամ*

Приложение N 3
Приказ министра финансов РА N 265-А
от 30 мая 2017 года

ОБЪЯВЛЕНИЕ
о внесении изменений в подписаном контракте.

Фонд <<Ереванского государственного медицинского университета имени М.Гераци>> для своих нужд, ниже предоставляет с целью приобретения товаров медицинского назначения, инструментов и принадлежностей, организованное в результате процедуры закупа, под кодом закупа «ԳՀԱՊՁԲ-2020/15-1-ԵՐՄИ» 23 декабря 2019 года, о внесении изменений в подписаном контракте № «ԳՀԱՊՁԲ-2020/15-1-ԵՐՄИ-6» 10 июля 2020 года, краткие сведения и копию двухстороннего утвержденного документа содержащего поправку.

Причина возникновения изменений:N1 изменение системы налогообложения у поставщика

Описание изменений: Подписание дополнительного соглашения с поставщиком в связи с изменением системы налогообложения

Обоснование изменения: решения правительства № 526-Н, пункт 56 правительства РА от *04.05.2017г. и Пункт 8.5 договора N* «ԳՀԱՊՁԲ-2020/15-1-ԵՐՄИ-6» *подписан 23 декабря 2019 года.*

Заказчик: Фонд *«Ереванского государственного медицинского университета имени М.Гераци »*